ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար պահնորդական ծառայություններ ձեռք բերելու նպատակով «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

27/12/2022թ.
ժամը 17:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Չոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Չիտչյան, Լ. Իսահակյան, Գ. Խաչատրյան, Լ. Շառաջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թադևոսյանը

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

1. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի մասին
(Ա. Չոբանյան)

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2022 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Չոբանյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Անվանումը
1	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ
2	«Կոմբատ սեքյուրիթի» ՍՊԸ
3	«ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ
4	«Քինգ Մարշալ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
(Ա. Զոբանյան)

3.1 Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
1. Պահնորդական ծառայություններ					
1	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	4 166 667	833 333	5 000 000	5 000 000
2	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	4 166 667	833 333	5 000 000	5 000 000
3	«Կոմբատ սեքյուրիթի» ՍՊԸ	4 800 000	-	4 800 000	5 000 000
4	«ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ	6 000 000	-	6 000 000	5 000 000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:
*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Բացված հայտերում պահանջվող պարտադիր և ոչ պարտադիր փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
(Ա. Զոբանյան)

4.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Կոմբատ սեքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրի/հավելված 1.2/ 1.3.3 բաժնում դրված չէ էլեկտրոնային ստորագրությունը, ինչպես նաև կցված չէ տեխնիկական բնութագրով պահանջված ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում: «ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ն ևս չի կցել ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորումը:

4.2 Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում /ներառյալ 26.12.2022թ./ շտկել արձանագրված անհամապատախանությունները:

Սահմանված ժամկետում «Կոմբատ սեքյուրիթի» ՍՊԸ-ն և «ՌԵԴ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

(Ա. Չոբանյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ երկու մասնակիցներն էլ՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ներկայացրել են հավասար գնային առաջարկ: Նիստը տեղի կունենա՝ ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում՝ Աբովյանի համայնքապետարանի նիստերի դահլիճում, 27.12.2022թ. ժամը 11:00-ին, 15 րոպե տևողությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը գնահատող հանձնաժողովի կողմից 27.12.2022թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներից ներկայացել է «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը հետևյալն է.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
1. Պահնորդական ծառայություններ					
1	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	4 162 500	832 500	4 995 000	5 000 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Չոբանյան)

Հաղթող (ընտրված մասնակից) ճանաչել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին

N 1 չափաբաժնով:

6.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր:

6.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Չոբանյան
Անդամներ՝		Ս. Չիտչյան
		Լ. Իսահակյան
		Գ. Խաչատրյան
		Լ. Շառաջյան
Համակարգող		Ա. Թադևոսյանը